

ՀԱՅ ԱՇԽԱՐՀ .

(նմանութիւն)

Կայ մի խեղճ աշխարհ, մի արեա՛ն աշխարհ—
Որի երկինքն է մթնա՛ծ, խաւարա՛ծ,
Եւ որի կրծքից ըղխում վշտահար
Արցունքի, արեան գետեր սրնթա՛ց...

Կա՛յ մի խեղճ աշխարհ, որի զաւակներ
Աւա՛ղ չե՛ն ապրում, այլ հեծում, տնջում.
Որոնց սրտերին ծանր շղթաներ
Ակօս են ձգում, արիւնով ներկում...

Այնտեղ կայ միայն մի գեղեցկութիւն—
Այն է խեղճ մարդկանց յստակ, մուգ արեան.
Այնտեղ միմիայն մի օրէնք իշխում—
Սըրի ու թըրի թալանի շրջան...

Այնտեղ լծում են անասունի տեղ
Խեղճ, թշուառ մարդկանց իրենց սայլերին.
Այնտեղ իշխում է վայրենին ուժեղ
Իր կտորուկ թրով թշուառի գլխին...

Այնտեղ է մարդկանց սեւ սպանդանոց—
Մարդը մորթւում է ժանտ մարդու ձեռքով.
Մօր կրծքին փարած մանուկն ալախօս
Իր մօր հետ կիսւում լոկ մի՛ հարուածով...

Այնտեղ որոտն է թնդում սաստկագին
Արին-կայծակներ սաստիկ շնչելով...
Աւեր է թողնում... կրկին խիստ ուժգին
Երկինքը մթնում թանձր ամպերով...

Այնտեղ քարերն են լալիս այդ մարդկանց
Արին-ծով սրտից. երկինքը տխրած
Երգում քրտուռ ազգի ըագմատանջ.—
Արցունք են թափում մարդկանց հետ զրկուած...

Կայ մի խեղճ աշխարհ, մի արեա՛ն աշխարհ
Որ կերակրում է զայլերի ըերնում.
Շղթաների տակ տանջւում չարաչար,
«Օգնեցէք, մարդիկ, օգնեցէ՛ք»... կանչում...

Այդ դժբախտ մարդիկն են իմ խեղճ եղբայրներ—
Հայերն են, որդիք-ծով թշուառութեան.
Երանց տանջողն են մարդիկ-զազաններ.
Արեան երկիրն է իմ «մայր Հայաստան»...

Յ. ԽԱՆԼԱՐՅԱՆ